Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» հոկտեմբերի 2010թ. N -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԹԻՎ 5 ԲՈՒԺՍԱՆՄԱՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18- րդ, 20-րդ հոդվածին, 67-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետին և 68-րդ հոդվածի 8-րդ մասին, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. «Թիվ 5 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 22 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Թիվ 5 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերության միացման պայմանագրի, փոխանցման ակտի կազմման և հաստատման աշխատանքների, դրան համապատասխան «Թիվ 22 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի չափի և կանոնադրության մեջ համապատասխան փոփոխությունների և լրացումների կատարումը, ինչպես նաև «Թիվ 5 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադարման պետական գրանցման գործընթացի իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԹԻՎ 5 ԲՈՒԺՍԱՆՄԱՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Թիվ 5 բուժսանմաս» ՓԲԸ-ն սպասարկում է Ջրվեժի «Մայակ» թաղամասի բնակչությանը, ընկերությունը ՀՀ ԱՆ ՊԱԳ-ի հետ կնքած պայմանագրի համաձայն իրականացնում է միայն տեղամասային թերապևտի գործառույթներ: Բացակայում են նեղ մասնագիտական և լաբորատոր-գործիքային ծառայությունները, վերջիններս իրականացվում են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ» ՓԲԸ-ի կողմից:

Ստեղծված իրավիճակը հնարավորություն չի տալիս իրականացնել ազգաբնակչության լիարժեք և մատչելի ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնություն, չի ապահովում բնակչության առողջության պահպանման շարունակականությունը և դիսպանսեր հսկողությունը: Նման պայմաններում ազգաբնակչությունը դիմում է այլ բուժհաստատություններ, որտեղ նրանց բուժսպասարկումն իրականացվում է վճարովի հիմունքներով:

«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն ունի անհրաժեշտ բոլոր պայմանները մեծահասակներին և մանկահասակներին ՀՀ ԱՆ չափորոշիչներով սահմանված բժշկական օգնություն ցուցաբերելու համար, կազմակերպությունը համալրված է բարձր որակավորում ունեցող բժիշկ-մասնագետներով:Տնօրենը ևս օժտված է բարձր կազմակերպչական ունակություններով և ի զորու է կազմակերպել նոր կազմավորվող ընկերության հետագա գործունեությունը:

Ընդ որում ընկերության վերակազմակերպվելուց հետո «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն իր գործունեությունը կծավալի նաև Ջրվեժի <<Մայակ>> թաղամասում գտնվող «Թիվ 5 բուժսանմաս» ՓԲԸ-ի զբաղեցրած տարածքում:

Ելնելով վերոգրյալից՝ ավագանու քննարկմանն է ներկայացվում «Թիվ 5 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԹԻՎ 5 ԲՈՒԺՍԱՆՄԱՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Թիվ 5 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ